ՊԱՅՄԱՆԱԳԻՐ MR – SC / 01-18

Ք. Երևան 23 փետրվարի 2018թ

«Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ -ն, ի դեմս գլխավոր տնօրեն Մ.Ջալալյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ «Գնորդ») մի կողմից և «Միկրորինգ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ռ.Մալխասյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ «Մատակարար») մյուս կողմից, հետագայում՝ «Կողմեր», կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1 . «Մատակարարը» պարտավորվում է, որպես «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից անվկացված «ՀԿՓԲԸ-ՄԱԱՊՁԲ-18/07» ծածկագրով գնման ընթացակարգի հաղթող, պայմանագրի 3.1 կետում նշված ժամկետներում «Գնորդին» մատակարարել հետևյալ սարքերը՝

N	Բնութագրերը	Քան.	Միավորի գինը (ՀՀ դրամ)՝ ներառյալ ԱԱՀ-ն	Ընդհանուր գինը (ՀՀ դրամ)՝ ներառյալ ԱԱՀ-ն
1	GSM մոդեմ iRZ MC52iT Այեհավաք mini GSM FME Սնուցման բլոկ 12Վ/1000մA iRZ COM պորտի երկարացման մալուխ Gembird/Cablexpert, 9M/9F, 1.8մ	5	61 800	309 000
Ընդամենը				309 000

1.2. «Գնորդը» վճարումները կատարում է համաձայն սույն պայմանագրի 2 բաժնի դրույթների:

2. Պայմանագրի գինը և վճարման ժամկետները

2.1. Պայմանագրի ընդհանուր գումարը կազմում է 309 000 (երեք հարյուր ինը հազար) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն, որը կազմում է 51 500 (հիսունմեկ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ:

2.2. Սույն պայմանագրով նախատեսված սարքերը «Գնորդին» կտրվեն հետևյալ պայմաններով.

- 100% վճարում ապրանքի մատակարարումից հետո 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացում՝ Մատակարարի կողմից դուրս գրված համապատասխան փակման հաշվի և հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա:

3. Կողմերի պարտավորությունները և իրավունքները

3.1. «Մատակարարը» պարտավոր է ապահովել սույն Պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարումը «Գնորդին» սույն պայմանագրի երկկողմանի ստորագրումից 20 օրացուցային օրվա ընթացքում:

3.2. Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև Պայմանագրով այդ ժամկետը լրանալը Պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ «Գնորդի» մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

3.3. Ապրանքը «Գնորդին» փաստացի հանձնելու դեպքում այն համարվում է «Գնորդի» սեփականությունը: Հանձնման պահին ստորագրվում է հանձնման- ընդունման արձանագրություն:

4. Կողմերի պատասխանատվությունը

4.1. «Մատակարարը» սույն պայմանագրով սահմանված առաքման ժամկետները խախտելու դեպքում վճարում է տույժ պայմանագրի ընդհանուր արժեքի 0.05%-ի չափով ամեն մի ուշացված օրվա համար՝ համաձայն «Գնորդի» պահանջի: Տույժի ընդհանուր գումարը չպետք է գերազանցի պայմանագրի ընդհանուր գնի 10%-ը:

4.2. Տույժի վճարումները 4.1. կետի համաձայն չեն ազատում «Մատակարարին» սույն պայմանագրով նախատեսված իր պարտականությունների կատարումից:

4.3. «Գնորդը» վճարումները ժամանակին չկատարելու դեպքում վճարում է տույժ պայմանագրի ընդհանուր արժեքի 0.05%-ի չափով ամեն մի ուշացված օրվա համար՝ համաձայն «Մատակարարի» պահանջի: Տույժի ընդհանուր գումարը չպետք է գերազանցի պայմանագրի ընդհանուր գնի 10%-ը:

4.4. Տույժի վճարումները 4.3. կետի համաձայն չեն ազատում «Գնորդին» սույն պայմանագրով նախատեսված իր պարտականությունների կատարումից:

5. Պայմանագրի գործողության ժամկետը

5.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրումից հետո և գործում է մինչև պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը:

5.2. Պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով 2 օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ:

5.3. Սույն պայմանագրից բխող վեճերը կողմերի միջև կարգավորվում են բանակցությունների միջոցով, համաձայնության չգալու դեպքում՝ ՀՀ օրենքի սահմանված կարգով:

6. Երաշխիքային սպասարկում

6.1. Տվյալ պայմանագրի շրջանակներում մատակարարվող iRZ MC52iT GSM մոդեմներին տրվում է 1 (մեկ) տավա երաշխիքային սպասարկման ժամկետ՝ հաշված ապրանքը Գնորդին հանձնելու պահից:

6.2. Երաշխիքային սպասարկումը չի իրականացվում միայն այն դեպքում, երբ սարքերը շարքից դուրս են եկել «Գնորդ»-ի կողմից դրանց սխալ շահագործման պատճառով, այսինքն՝ սարքերը շահագործվել են արտադրող ֆիրմայի կողմից սահմանված շահագործման պայմանների խախտմամբ:

7. Իրավաբանական հասցեները

«Մատակարար»	«Գնորդ»
«Միկրորինգ» ՍՊԸ	«Հաշվարկային Կենտրոն» ՓԲԸ
ք. Երևան, Սայաթ-Նովա 33/63	ք.Երևան, Աբովյան 27
«Ինեկոբանկ» ՓԲԸ	«Կոնվերս բանկ» ՓԲԸ
h/h 2050022150151001	h/h 1930000600150100
ՀՎՀՀ՝ 00824922	ՀՎՀՀ՝ 01544167
Տնօրեն՝	գլխավոր տնօրեն
Ռոստոմ Ավետիսյան	Մ.Ջալալյան